ՀՀ Կենտրոնական Բանկի ցանցին համակցելու և սպասարկելու ծառայության ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան «31» մարտի 2022թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. Ավագյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖՎ&Գ» ՍՊԸ, ի դեմս ընկերության տնօրեն Վարդան Ղազարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Կենտրոնական Բանկի CBANet տեղեկատվական ցանցին օպտիկական կապուղու միջոցով համակցելու և սպասարկելու ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն): Համակցումը կատարվելու է ՀՀ-ում գործող կապի մատակարար ընկերությունների տրամադրած կապուղիների միջոցով:

Սպասարկումը ենթադրում է

1. Ապահովել կապուղու անխափան աշխատանքը
2. Ցանցին միացված աշխատակայանների վրա տեղադրել և սպասարկել Լոտուս Նոթս (Lotus Notes) համակարգը
3. Հեռավար միացված համակարգիչը միացնել Cisco AnyConnect ծրագրին
4. Լրացուցիչ համաձայնագրերի համաձայն կատարել Պատվիրատուի այլ հանձնարարություններ՝ պահուստային կապուղու տրամադրման, Ներքին ցանցի և համակարգչային տեխնիկայի սպասարկման ծառայություններ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Կապի խափանում հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել Կատարողին, օգտագործելով 2.4.4 կետի տվյալները:

2.2.3 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Ապահովել կապի անխափան աշխատանքը: Ապահովել կապի սարքավորումների միացման համար անհրաժեշտ ծրագրերով:

2.4.3 Ներդնել Lotus ծրագիրը, ապահովել ծրագրի աշխատանքը, ծրագրային թարմացումները: Կատարել ուսուցողական և խորհրդատվական աշխատանքներ:

2.4.4 Պատվիրատուի համար ապահովել 24/7 ռեժիմով աշխատող ահազանգման կենտրոնի աշխատանքը հետևյալ կոնտակտային տվյալներով.

Հեռ: (010) (091) (012) - 239313

Email: info@fvg.am

2.4.5 Կապի խափանման մասին տեղեկանալուց հետո, Կատարողը պարտավոր է 24 ժամվա ընթացքում վերացնել խափանումը: 24 ժամից ավել խափանման դեպքում, եթե վթարի աստիճանը շատ մեծ է, Պատվիրատուին տեղեկացնել այդ մասին և կատարել փոխադարձ հաշվարկ համաձայն սույն պայմանագրի 5.2 կետի:

2.4.6 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում, լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում, դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պատվիրատուի կողմից մատուցված ծառայությունն ընդունվում է Կատարողի կողմից դուրս գրված հարկային հաշվի հաստատմամբ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է - 10 ՄԲիթ/վ արագությամբ Data ծառայության հիմնական կապուղու համար ամսական 9000 (Ինը հազար) դրամ, գումարած ԱԱՀ-ն 1800 (Հազար ութ հարյուր) դրամ, ընդամենը 10800 (Տասը հազար ութ հարյուր) դրամ:

Ծառայության մատուցման գնի փոփոխությունը կատարվում է երկկողմ համաձայնության դեպքում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հարկային հաշվի դուրս գրման օրվանից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացած ժամի համար կարող է գանձվել տույժ՝ այդ ժամանակահատվածի համար սահմանված տարիֆի չափով՝ (ամսական վարձ)/(30x24):

5.3 Պատվիրատուի մեղքով առաջացած կապի խափանման դեպքում չի գործում պայմանագրի 5.2 կետը:

5.4 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.5 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն,

որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունքունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2022թ.-ի ապրիլի 1-ից:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժան մասը:

ա) սույն պայմանագիրը կարող է ցանկացած ժամանակ միակողմանիորեն լուծվել Կողմերից մեկի պահանջով՝ այդ մասին մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

բ) Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ. որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ պայմանագրի արհեստական փոփոխման:

7.4 Այլ ծառայությունների մատուցման համար կնքվում են սույն պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագրեր:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա Բանկ՝ Կենտրոնական գանձապետարան h/h 900011288025 ՀՎՀՀ 01223338	«ՖՎ&Գ» ՍՊԸ Հասցե՝ՀՀ,0014, ք. Երևան, Ազատության պողոտա 24, 4 շինություն Բանկ՝ «ԱրմՍվիսԲանկ», h/h 25000105200110 ՀՎՀՀ 03004979 Տնօրեն
_____ Ա. Ավագյան (ստորագրություն)	_____ Վ. Ղազարյան ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.